ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-606-31.05.2023-ԳԿ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում՝ «կրթական գործընթացում» բառերը փոխարինել «ուսումնադաստիարակչական գործընթացներում» բառերով.		Ընդունվել է
2.	Հեղինակ	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի՝ 1. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1-ին մասը լրացնել նոր՝ 8-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ. «8) «երեխայի կրթության իրավունքի իրացման, մանկավարժների և ծնողների հետ արդյունավետ փոխգործակցության, ինչպես նաև այլ դպրոցների նմանատիպ խմբերի հետ համագործակցության համար դպրոցում ստեղծելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների փոխօգնության խումբ կամ միանալ արդեն իսկ ստեղծված փոխօգնության խմբերին:»: 2. 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:		Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 11-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «11) Խթանել բոլոր սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացներում, այդ թվում՝	Առաջարկն ընդունվել է: Անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է

			արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում՝ դասարանում ապահովելով խտրականությունից զերծ միջավայր և կանխարգելելով աշակերտների մեկուսացումը:»:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով՝ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2.1 մասնակցելու երեխայի անհատական ուսուցման պլանի մշակմանը.»:	Առաջարկն ընդունվել է: Անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասում «մարդու,» բառը փոխարինել «մարդու, պետության,» բառերով և «, իսկ ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի» բառերից հետո հանել «պետության,» բառը:	Առաջարկն ընդունվել է: Անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5. 2-րդ մասի 4-րդ կետում «և շրջակա միջավայրի» բառերը փոխարինել «, շրջակա միջավայրի, այդ թվում՝ բնության և կենդանիների» բառերով»:	Անհրաժեշտություն չկա, քանի որ հեղինակի առաջարկով այդ մասը ուժը կորցրած է ճանաչվել:	
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով՝ Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 9-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «9) մասնակցել երեխայի անհատական ուսուցման պլանի իրականացմանը:»:	Առաջարկն ընդունվել է: Անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով՝ Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի վերջում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով	Առաջարկն ընդունվել է: Անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը և 2-րդ մասը հանել:	Առաջարկն ընդունվել է: Անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է